

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻ (1678—1978) ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի:

Այսօր Մայր տաճարում, ժամը 11-ին, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Թուրքիայի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքը՝ ի հիշատակ Կ. Պոլսի հանգուցյալ տ. Հովհաննես Կոլոտ մեծագործ պատրիարքի ծննդյան 300-ամյակի:

«Հայր մեր»-ից առաջ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանն ընթերցում է Հայոց Հայրապետի 1977 թվականի օգոստոս 29 թվակիր սրբատառ կոնդակը՝ նվիրված տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակին, որով 1978 թվականը հայտարարվում էր հոբելյանական տարի և հրահանգվում՝ ս. պատարագի մատուցմամբ, քարոզներով և հանդիսություններով պանծացնել լուսաբնակ պատրիարքի եկեղեցաշեն, կրթանվեր փառավոր վաստակն ու գործունեությունը:

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո պատարագիչ սրբազան պատրիարքը քարոզում է հոբելյար տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի կյանքի և գործունեության մասին:

Այնուհետև Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան հատուկ կարգ՝ ի հիշատակ հոգելույս տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի:

Այս առթիվ հոգեհանգստյան պաշտոն է կատարվում նաև արևմտահայ անվանի բանաստեղծ Վահան Թեքեյանի ծննդյան 100-ամյակի առթիվ՝ խնդրանքովը ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող «Թեքեյան մշակութային միության» ամերիկահայ և կանադահայ անդամների:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, ժամը 18.30-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված Կ. Պոլսի հայոց տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակին:

Հանդիսությունն սկսվում է խմբովին արտասանված Տերունական աղոթքով, որից հետո բացման բովանդակալից խոսքով հանդես է գալիս եգիպտահայոց թեմի առաջնորդ տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Օրվա հանդիսության գլխավոր բանախոսն է Թուրքիայի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքը, որը հանգամանորեն ներկայացնում է իր գրավոր զեկուցման մեջ տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի եկեղեցական, կրթական, քարոզչական և հրատարակչական բեղուն գործունեությունը:

Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
(8 հոկտեմբեր 1978 թ.)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԸ

«Հովհաննես պատրիարք Բաղիշեցի, ոչ միայն իր դարուն, այլ նաև շատ դարերուն համար, կարկառուն դեմք մըն է, կարողությամբ և արդյամբ մեծ, որ Սահակներու և Շնորհալիներու պես հռչակ ու պաշտամունք ունեցած կըլլար, եթե ավելի հին դարերուն մեջ ապրած ըլլար»:

Այս խոսքերով եզրակացության կբերե Օրմանյան պատրիարք Կոլոտի մասին իր գրածները իր ԱԶԳԱՊԱՏՈՒՄ կոթողական գործին մեջ (հատված 1999):

Նույն խոսքերով կբանանք մենք ալ այն ընդհանուր ակնարկը, զոր հանդերձյալ ենք նետել անոր կյանքին ու վաստակին վրա, իր ծննդյան 300-ամյակի առիթով:

ԿՈԼՈՏ մականվանյալ Հովհաննես Բաղիշեցի վարդապետը կգրավե բարձրագույն տեղը Կ. Պոլսո 82 պատրիարքներու շարքին մեջ, իբրև սըրբակենցաղ հոգևորական, իբրև քաջ քարոզիչ վարդապետ, իբրև դաստիարակ ուսուցիչ և իբրև արդյունաշատ մշակութային ու հոգևոր գործիչ: Ու իր այս հանգամանքներով կներկայանա միաժամանակ ամենեն նշանավոր առաջնորդներեն ու ռահվիրաներեն մեկը Հայաստանյայց եկեղեցիին և հայ մշակույթի պատմության մեջ:

Հայ ժողովուրդի արևմտյան հատվածին մեջ կատարած է բարեկարգական ու մտավորական կարևոր աշխատանք, որոնց շնորհիվ արժանացած է արևմտահայության վերածնունդի հայր լինելու բարձրագույն պատիվին:

Կատարած է նաև փրկարար դեր մը մեր եկեղեցվո երկու պատրիարքությանց կյանքին մեջ:

Ավելի հստակ ըմբռնելու և լավագույնս արժեվորելու համար անոր կատարած դերին մեծությունը, անհրաժեշտ է նախ համառոտ ակնարկ մը նետել այս պատրիարքությանց պարզած կացության վրա անոր ծնունդը կանխող տարիներուն և իր ապրած շրջանին:

Կ. Պոլսոյ և Երուսաղեմի պատրիարքական Աթոռներու անկյալ կացությունը նախքան Կոլոտի պատրիարքանալը

ՊՈԼԻՍԸ գրավող Ֆաթիհ Մեհմետ Սուլթանի նախաձեռնությամբ՝ 1461-ին հաստատված Կ. Պոլսոյ պատրիարքության առաջին 120 տարիները կհատկացվին նոր միջավայրի մեջ տեղավորվելու և Պոլսոյ հայ համայնքը՝ միայն կառավարելու սովորական և ընթացիկ աշխատանքներուն:

Իսկ ԺԶ դարուն վերջերը սկսած՝ ու ամբողջ ԺԷ դարուն շարունակված են, օրվան ազդեցիկ ամիրաներու մեղսակցությամբ, պատրիարքական Աթոռը իրարու ձեռքեն.խլելու տնավեր պայքարները, որոնք կքանդեն համայնքին բարոյական կենսունակությունը և կքամեն անոր նյութական կարողությունը, քանի որ Աթոռը կգտնվեր խոշոր գումար մը վճարելով արքունիքին, չհիշելով քովնտի կաշառքները ստորադաս պաշտոնյաներու: Բաց աստի պատրիարքությունը պարտավոր էր պետության վճարել շոշափելի տարեկան տուրք մը:

1600-են մինչև Կոլոտի պատրիարքությունը, 115 տարիներու ընթացքին Աթոռ բարձրացած ու իջած են 30—35 անձեր գրեթե 60 անգամ: Միջին հաշվով յուրաքանչյուր պատրիարք Աթոռի վրա մնացած է 2—3 տարի: Մինչդեռ այդ միջինը սկզբնական շրջանի 140 տարիներու 17 պատրիարքներու համար եղած է 8—9 տարի, իսկ Կոլոտեն ասդին 240 տարիներու 50 հոգիի համար 5—6 տարիներ: Այնպես որ պատրիարքության առաջին 250 տարիներու ընթացքին շատ քիչ են դրական ակնհայտնի գործերը և ավելի նվազ են շինիչ կրոնական հարցերով զբաղող և ուսման ու մշակութային ձեռնարկներով պարապող պատրիարքներու թիվը:

Կաթոլիկամետ հատված մը մեջտեղ եկած էր պոլսահայոց մեջ ԺԷ դարուն, ինչ որ ավելի սրեց պատրիարքական Աթոռը գրավելու այս հոռի մրցակցությունը: Այս պայքարը իր հատկանշական ու խորհրդանշական ձևին մեջ ի հայտ կուգա այն ավելի քան երեսնամյա մաքառումին մեջ, զոր ունեցան Գր. Կեսարացի պատրիարքը, իբրև ախոյանը Հայաստանյայց եկեղեցվո ինքնուրույնության, և Հովհաննես Խուլը, իբրև ներկայացուցիչը կաթոլիկամետ հատվածին: Ասոնք իրար տապալեցին Աթոռեն 4—5 անգամ և նույնքան անգամներ ալ Աթոռ բարձրացան: Գրիգոր Կեսարացի 4 անգամ Աթոռ բարձրանալով օգտակարապես պաշտոնավարեց շուրջ քառորդ դար և վախճանեցավ պատրիարքական պաշտոնի վրա 1636-ին: Իսկ Խուլը նույնքան անգամներ Աթոռը գրավելով պաշտոնավարեց հազիվ 4—5 տարիներ, և որ ի վերջո մեռավ 1636-ին Հռոմի մեջ իբրև հռոմեադավան:

ԺԷ դարու կեսին, ազգին մեծամեծները այլևս տաղտկացած ըլլալով այս ամուլ պայքարներեն և տեսնելով որ յուրաքանչյուր նոր պատրիարք նոր պարտքի պատճառ կըլլա, կորոշեն Աթոռին գործերը վարել առանց պատրիարքի՝ աշխարհականներե բաղկացած ՏԵՂԱԿԱԼՆԵՐՈՎ:

Պատրիարքարանը անկումի անդունդներու մեջ է Կոլոտի ծննդյան հաջորդող տարիներուն, մինչև 1690-ական թվականները, երբ հախուռն քահանաներու ձեռքը խաղալիք եղած է Աթոռը:

Ասոնցմե առաջինն է մի ոմն Անդրեաս ամբոխավար քահանան, որ ծանոթ է պատմության մեջ «Ճեհենեմ Մերտիվանը» (Դժոխքի Սանդուխ) մականունով: Ասոր կհաջորդե ուրիշ անուս քահանա մը, «Տեր Կրպո» կոչված, որ հինգ անգամ Աթոռ եղած-իջած է պաշտոնավարելով ընդամենը հազիվ 8 տարի: Ապա կուգա մի ոմն Սարգիս, որ կայսերական բանակին

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔ

հացը հայթայթելուն համար կոչված է «էքմեքճի», որ քահանա ձեռնադրվեցավ և իրեն ծանոթ ազդեցիկ պետական մարդոց միջոցավ ձեռք ձգեց պատրիարքարանը, գուցե շարունակելով իր «էքմեքճիության» շահաբեր գործը: Հուսկ ապա հրապարակ կիջնե ոմն Թորոս երեց որ երկիցս Աթոռին տիրանալով հանդերձ հազիվ տարի մը միայն կպաշտոնավարե:

Ասոնցմե հետո «ազգային մեծամեծները» պատրիարքներու մրցակցութենեն կրկին զզված, նորեն կորոշեն պատրիարք չընտրել, «և իրենց ձեռքը կանցնեն պատրիարքական գործերը տեղակալության անունով, որուն առաջին օրինակը տեսանք 40 տարիներ առաջ: Տեղակալության գլուխը գտնվողներեն էին Սահաօղլու կոչված դերձակ մը, և Շահին անունով որմնադիր մը. հարկավ ազդեցիկ արհեստապետներ և պետական գործապետներ, որոնք իրենց մոտ միշտ եկեղեցական փոխանորդ մը պահեցին» (Ազգապատում, էջ 2641):

Վերոհիշյալ տխուր պարագաները հիշեցինք պարզապես ցույց տալու համար պատրիարքական Աթոռին անկյալ վիճակը:

Ժամանակակից գրող մը արդարև կհաստատե որ, «Պատրիարքունք անուանեալքն յաճախեալ ի չարիս և թողլով զփառս զառ ի միոյն Աստուծոյ, ուսան կաշառօք և տոկոսիւք խլել յիրերաց զպաշտօնն»: Ասոր հետևանքը եղած էր անտանելիորեն բարձրանալը պատրիարքարանի պարտքին, զոր թեթևցնելու համար պաշտոնի վրա եղողները սկսած էին եկեղեցիները կողոպտել զրկելով զանոնք իրենց եկամտաբեր կալվածներեն և զարդերեն: Անկանոն այս վիճակին մեջ անկարգություններն ալ շատցած էին, մինչև որ Աստուծո ողորմությամբ 1715-ին պատրիարք կընտրվի Հովհաննես Բաղիշեցին, որով վերջ կտրվի այս անկարգությանց, գեթ քառորդ դար մը. իսկ անկե հետո ալ, անկարգության թափը կոտրած ըլլալով, ըստ բավականին կշտկվին Աթոռին գործերը:

Երուսաղեմի պատրիարքական Աթոռն ալ այդ օրերուն ենթարկված էր դժբախտ կացության մը, որուն դարմանումին սկզբնապատճառը դարձյալ եղավ նույնինքն Կոլոտ:

1705-ին Երուսաղեմի Աթոռը միացած էր Պոլսո Աթոռին հետ. այնպես, որ այս վերջինի գահակալը կկառավարեր Երուսաղեմի հայոց վանքը փոխանորդներով, որոնք տակավ առ տակավ վերածվեցան բռնակալներու և տզրուկներու, որոնք սուրբ Աթոռի արյունը և արդյունքը կծծեին: Երուսաղեմի ժամանակակից պատմիչը՝ Հաննե վարդապետը մռայլ գույներով կնկարագրե օրվան կացությունը, «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈ ԵՎ ՄԵԾԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ» անուն իր գրքին մեջ, ուր ընդարձակ հատված մը հատկացուցած է նկարագրելու համար Աթոռին անկյալ վիճակը (էջ 103—113):

Այս բոլոր չարյաց ակը և պատճառը կնկատե Հաննե՝ Երուսաղեմի Աթոռին միացումը Պոլսո Աթոռին, որմե այնքան մեծամեծ վնասներ առաջ եկած են, զորս, կըսե ան, «Գրով պատմելն գրեթե ոչ է հնար»:

Որովհետև Պոլսո պատրիարքական Աթոռը, ինչպես տեսանք, ձեռք կձգվեր մեծամեծ գումարներով ու կաշառքով, և այս դրամը գոյացնելու համար ամեն միջոցներու կդիմեին պատրիարքները: Այդ միջոցներեն մեկն էր Երուսաղեմ երթալիք ուխտավորներու «Դարպասները», ուխտավորական նվերները, գանձել Պոլսո մեջ. որով սուրբ Աթոռը չէր կրնար օգտվիլ անոնց բերելիք նվերներեն: Ուստի Երուսաղեմի փոխանորդները և միաբանությունը ապրելու համար հարկին տակ կգտնվեին պարտք առնելու: «Օր ի վերայ աւուր պարտքն լեռնացեալ բարդակուտիւր ի վերայ Տանն

սրբոց Յակոբեանց», կըսե Հաննե: Հաննե պատմիչ պատկերալից կերպով կներկայացնե ասոնց անհագ ախորժակները. «Որք իբրև լաբլիզող գայլս, և որպէս կատաղի շունս արեան ծարաւեալս, գային ի յԱթոռն սրբազան, ՎԷՔԻԼ, ՂԱՊՉԻՄԱԼ և ՊԱՊԱ անուամբ...»:

Այնքան շատ պարտատերներ ուներ ս. Աթոռը, որ ըստ Հաննեի «մինչ զի գրեթէ ի մէջ սրբոյ Երուսաղէմի դժուարաւ գտանիւր ոք, որ չիցէ փոխատու սրբոյ Աթոռոյս. և օրըստօրէ աւելանայր պարտքս և դիզանայր տոկոսին և այնքան թշուառացան ի ներքոյ պարտուց և անհաւատարիմ գտան պարտատիրացն, մինչ զի այնուհետև ոչ ոք գրաւով ևս հաւատայր նոցա դրամ»:

«Սրբազան վարդապետներու ըսածին համաձայն, կգրե Հաննե վարդապետը, երբ աշխարհե օգնություն կարելի չէ ստանալ, այն ատեն Աստված արագապես օգնության կփութա, ինչպես արդարև ըրավ ասիկա մեզի հանդեպ հայտնապես: Որովհետև երբ անմխիթար տիրության մեջ էինք, հայտնեց Փրկիչն մեր Հիսուս Քրիստոս իր մարդասիրության անհուն ողորմությունը հայոց ազգիս հանդեպ: Անհուն գութ ցույց տվավ Հաբեթյան տոհմիս վրա, և հիշեց մեր սուրբ հոր Գրիգոր Լուսավորչի տառապանքները, նեղությունները և վաստակը: Քաղցր աչքով նայեցավ Աթոռին ըստ մարմնո իր եղբոր արդար Հակոբի և առաջին եպիսկոպոսին սուրբ քաղաքի. մեծարեց արյունաթաթախ սուրբ գլխադիրը—գլուխի գերեզմանը—իր սիրելի աշակերտին և խնայեց իր այգին, զոր գնեց իր արյունով խաչին վրա...: Ուստի իր սերը և շնորհը արմատացուց Հովհաննես Բաղիշեցի Աստվածաբան վարդապետի սրտի մեջ, և իր ձեռքին մեջ առավ զայն իբրև գործիք իր այցելության» (Անդ, էջ 114):

Հովհաննես Կոլոտ պատրիարքի կյանքը

Ինչպես պատմության գրեթե բոլոր մեծերուն՝ այնպես ալ Հովհաննես Կոլոտի կյանքին նախնական շրջանի մասին գրեթե ոչինչ գիտենք: Մինչև իսկ Կոլոտի բուն ծննդավայրին ու ծնողաց անունները անծանոթ կմնան: Բազմիցս կխնդրե ան իր «Յիշատակարան»-ներուն մեջ, որ հիշենք իր հանգուցյալ ծնողքը, բայց առանց տալու անոնց անունները: Ու այն քիչը զոր գիտենք իր վաղ վարդապետական կյանքի մասին կքաղենք իր իսկ «Պատմագրաբար Յիշատակարան»-են, զոր գրած է 1719-ին իր հրատարակել տված ՋԵՆՈԲ ԳԼԱԿ-ի պատմության գրքին վերջավորության:

Այս «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ»-ը հրատարակած է Բաբգեն վրդ. Կյուլեսերյան իր ԿՈԼՈՏ պատրիարքի նվիրյալ ուսումնասիրության մեջ (էջ 142—175):

Մեր մեջբերումները կընենք այս գիրքեն: Իսկ իր փրկարար գործունեության մասին մեր ունեցած տեղեկությունները կքաղենք ՀԱՆՆԵ վրդ. Երուսաղեմացի պատմիչեն, որ եղած է միաժամանակ ձեռներեց և սրտակից գործակից Կոլոտին և Շղթայակրին: Մասնակի տեղեկություններ կան նաև Կոլոտի մասին իր բազմաթիվ «Հիշատակարան»-ներու և ժամանակակից այլ աղբյուրներու մեջ:

Կոլոտ երբ 1706-ին կհայտնվեր պատմության թատերաբեմի վրա, արդեն իսկ ձեռնադրյալ ու կազմավորյալ 28 տարեկան երիտասարդ, անձնվեր ու գործոն վարդապետ մըն է:

Իր ուսմունքը ստացած է Բաղեշի շրջանի Ամլորդիի, ժողովրդական բացատրությամբ՝ ԱՄՐՏՈԼՈՒ վանքը, աշակերտած ըլլալով այդ ժամանակի

մեր նշանավորագույն վարդապետներեն ու նույն վանքի վանահայր ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻԻՆ, զոր հաճախ կհիշե որդիական անխառն սիրով իր «Հիշատակարան»-ներուն մեջ: Այստեղ իրեն իբրև երեց աշակերտակից կունենա Գրիգոր Շիրվանցի նույնքան շնորհալի վարդապետը, որուն հետ սրտակից սիրով կկապվի ամբողջ իր կյանքի տևողության և երկուքով միասին նախանձամական դեր կկատարեն նախ Մուշի ս. Կարապետ վանքի վերանորոգության և ապա Կ. Պոլսո և Երուսաղեմի Աթոռները կորուստե և անկումե փրկելու գործին մեջ:

Ամրտոլու մեր այն սակավաթիվ վանքերեն էր, որոնց մեջ իսպառ չէր մարած հոգևոր կյանքի և իմացական լույսի կանթեղը: ԺԵ դարուն, աստվածային հատուկ նախախնամությամբ հանկարծ կարծարծվի՝ լուսավոր ձեռքերու և հոգիներու կողմե այդ կանթեղը, վերածելով այս փոքր վանքը գիտության և ուսմունքի կեդրոնի մը: Լույսի այս նոր բոցը բերված էր Սյունյաց դպրոցեն և ստեղծված էր «Դասատուն» մը, «Սրբազան և արտաքին ուսումներու, ու բավական արդյունավոր կյանք ունեցած էր» վանահայր ԲԱՐՍԵՂ վարդապետի առաջնորդության ու վարդապետության ներքև: Բարսեղ իր ժամանակի «երևելի և մեծանուն» վարդապետներեն մեկն էր, որ շենցուց վանքը, «Դասատուն» հաստատեց, և «որ պատճառ եղև գտանելոյ արտաքնոց գրոց գիտութեան»: Հասցուց շատ աշակերտներ, որոնցմե ոմանք Մովսես կաթողիկոսի օրով Էջմիածնի մեջ հաստատեցին նոր ուսումնարան մը (որմե շրջանավարտ է նաև Սիմեոն Երևանցի ապագա մեծ կաթողիկոսը 1763—1780): Բարսեղեն հետո կուգա նույնինքն Վարդան Բաղիշեցին, որ վերաշինեց Ամրտոլի վանքը և ավելի զարկ տվավ այնտեղ հաստատված «Դասատուն»-ին: Մասնավոր հոգ տարավ և հարստացուց այս վանքը «աշակերտական գրովք և ճոխ զարմանալի վարդապետական պէտպէտ մատենիք»: Իր ջանքերով «իրապես ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»-ի մը վերածվեցավ այս փոքր վանքը: Արդ, Հովհաննես և Գրիգոր այս «Համալսարան»-ի լավագույն և նշանավորագույն աշակերտները եղան: Վարդան «Քաղցրաքարոզ և համեղաբան» վարդապետը վախճանեցավ 1705-ին, որմե հետո ըստ երևույթին ստեղծված է վանքին մեջ անհամ կացություն մը, որուն հետևանքով այս երկու վարդապետները հարկադրվեցան հեռանալ իրենց սիրելի այդ ուսումնավայր «բարձրահամբավ և մեծ համալսարան» վանքեն, ուրիշ տեղեր գործելու վայր կամ ասպնջական բույն մը գտնելու հույսով: Զանազան վանքեր հանդիպելե հետո՝ ի վերջո կանգ առին Մշո Ս. ԿԱՐԱՊԵՏ հռչակավոր մայրավանքը, որուն առաջնորդը Կարապետ եպիսկոպոս սիրով ընդունեց զանոնք:

Ձմեռները սովոր էին քարոզության ղրկվիլ շրջակա գավառները, իսկ գարնան վանք կվերադառնային: Ս. Կարապետի վանահոր մահեն հետո Կոլոտի անբաժան ընկերը՝ Գրիգոր Շիրվանցին վանահայր ընտրվեցավ: 1709-ին սաստիկ երկրաշարժ մը «քայքայեալ և կործանեալ» վիճակի կը-մատնե այս վանքը:

Երկու լծակից վարդապետներու գլխավորությամբ կձեռնարկվի վերաշինության հնկա գործին, որ ծանր պարտքերու ներքև կձգե վանքը: Կոլոտ նվիրահավաքության կղրկվի վանքը իր պարտքերեն ազատելու նպատակավ: Զանազան գավառներ հանդիպելե հետո՝ Կոլոտի իսկ բառերով «Հասաք յաջողմամբ Տեառն յաստուածակեցոյց, արքայանիստ, կայսերապերճ, բազմամարդ քաղաքն ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ» (Անդ, էջ 163): Պոլսո օրվան պատրիարքն էր Իսահակ Ապուչեխցի, որ ըստ վկայության նույն-

ինքն Կոլոտի, «ընկալաւ սիրով զմերս նուաստութիւն և յորդորեաց զաստուածասէր զժողովուրդսն, որք ետուն զողորմութիւն լիալիր, և բազում յիշատակս զարդուց սրբոյ Տաճարին» (Անդ, էջ 163): Շնորհիվ Կոլոտի՝ ազատվեցավ ս. Կարապետի վանքը իր «բազմատոկոս» պարտքեն և առաջվանեն ավելի, «գերազանցապէս շքեղացաւ»: Հավաքված գումարը և եկեղեցական նվերները ինք տարավ Մուշ, թե ուրիշներու ձեռքով ղրկեց՝ հայտնի չէ. սակայն բացահայտ է, որ 1713-ին դեռ Կ. Պոլսո մեջ է, ինչպես ինք կհաստատե. «մինչ էաք ի Բիւզանդիայս ի ՌԾԿԲ—1713—թուականին»:

Ս. Կարապետի վանքին ծանր պարտքը շիջուցանելու գործին մեջ Կոլոտին ցույց տված հաջողությունը ամենքի մտքերուն մեջ կստեղծե տրամադրությունը լծելու զայն ավելի կարևոր վանքի մը և ավելի մեծ պարտքի մը շիջուցման գործին: Երուսաղեմի վանքը, ինչպես վերև հիշեցինք, հսկա պարտքի մը ներքև լուրջ վտանգի ենթարկված էր. ուստի իր իսկ բառերով «Բազում անգամ հրավիրմամբ և սաստիկ ստիպմամբ աստուածասէր ժողովրդոց և յորդորմամբ Տեառն Իսահակայ պատրիարքին», որ միաժամանակ Երուսաղեմի ալ պատրիարքն էր, քանի որ երկու Աթոռները միացած էին, Կոլոտ ստիպվեցավ Երուսաղեմի «Աթոռական և Վէքիլ» ըլլալու պաշտոնը: Ուստի, կշարունակե ան իր «Հիշատակարան»-ին մեջ «հարկեցեալ եղաք տանիլ զողորմութիւն հաւատացելոց Երուսաղէմ և ծառայել աստուածակոխ տեղեացն» (Անդ, էջ 164):

1713-ին Երուսաղեմ հասնելուն պես՝ անմիջապես ձեռնարկեց գործի: Գրավի տակ առնված սրբավայրերն ու սուրբ անոթներն ազատեց. այնպես որ «սակաւ ինչ շնչառութիւն եղև սրբոյ Տանս այսորիկ»: Իր ներկայությունը նոր կյանք և ոգի ներշնչեց սուրբ Հակոբա վանքին: Քրիստոնյա և ոչ քրիստոնյա հարգեցին զինքը: Երուսաղեմի փաշան «Կարի հաւանեցաւ» Կոլոտի կարգադրությանց և իր գնահատանքը արտահայտելու համար ըստ ժամանակի սովորության «խիլայեց» Կոլոտը:

Ի վերջո միաբանության մեջ խելք և խիղճ ունեցողները Կոլոտի շուրջը հավաքվեցան և անոնց խորհրդով Կոլոտ կոտրտեց «զկնիքս պարտուց», կամ «Օրթայի կնիք» ըսվածը, որով կնքեին այս «վէքիլ» կոչեցյալ կողոպտիչները այն պարտամուրհակները, որոնցով պարտք կառնեին իբր թե վանքի գործածության համար, սակայն կվատնեին իրենց անձնական հաճույքին համար: Ու միաբանները կաղաչեն Կոլոտին, և գրեթե կստիպեն զայն որ վերադառնա Պոլիս և պատմե անտանելի աղետները, որոնց ենթարկված է սուրբ Աթոռը այս վատ «վէքիլ»-ներու ձեռքեն և աշխատի հնարք մը գտնել ազատելու համար սուրբ Հակոբը: Ուստի Կոլոտ վանքի պարտատերներուն չորս տարվան երաշխավորություն տալով վերադարձավ Պոլիս և պատմեց «զամենայն աղէտ սուրբ Տանն»:

Պոլսո մեջ «լուեալ արանց բարեպաշտից, քահանայից, իշխանաց և առ հասարակ ժողովրդոց զտառապելութիւն և զկսկիծ սրբոյ Տանն» Երուսաղեմի, ի վերջո Կոլոտի առաջարկեցին Պոլսո պատրիարքությունը, «վասն օգտի և շահու Տանն սրբոյ»: Կոլոտ կվկայե, որ թեպետև այս գործը հաճելի չէր իրեն, բայց հանձն առավ, «որպեսզի բաժնվի Երուսաղեմի պատրիարքությունը Պոլսո պատրիարքութենեն» (Անդ, էջ 178):

Կոլոտի առաջին գործը եղավ առաջարկել և պնդել «ի Վերայ արժանաւոր անձին, Տեառն Գրիգորի հօր մերոյ երջանկի», որպեսզի ան ալ Երուսաղեմի պատրիարք ըլլար: Մեծամեծները սիրով ընդունեցին նաև այս պայմանը:

Ի պատիվ օրվան պատրիարքին՝ Հովհաննես Գանձակեցիին՝ պետք է ըսել, որ խոհեմաբար տեղի տվավ մեծամեծներուն և ժողովուրդի բաղձանքին և ինքնաբերաբար հրաժարեցավ իր պաշտոնեն:

Կոլոտ պատրիարք ընտրվեցավ 1715-ին, 37 տարեկան առույգ հասակին մեջ: Իր ընտրության հաջորդ օրի իսկ ս. պատարագի ընթացքին իբրև Երուսաղեմի պատրիարք հիշատակել տվավ «ՀՏԷՐ Գրիգոր Աստուածաբան Վարդապետն», ս. Կարապետի վանահայրը և իր սրտակից ընկերը:

Ազգովին որոշված այս բոլոր կարգադրությունները, ըստ ժամանակի սովորության, կայսեր կողմե ևս վավերացվեցան, զատ-զատ ֆերմաններ հանել տալով Պոլսո և Երուսաղեմի պատրիարքներուն համար: Ապա Կոլոտ «Մեծահանդէս Սիւնհոդոս» մը գումարեց Մայր եկեղեցվո մեջ և երկու Աթոռներու իրարմե անջատումը հաղորդեց, 1716-ին, օրվան Ամենայն Հայոց Հայրապետին, Աստվածատուր Ապատանցիին, որ շատ գոհ մնաց այս կարգադրութենեն և գրեց Մուշ ս. Կարապետի վանահայր Գր. Ծիրվանցի վարդապետին, որ ընդունի առաջարկված պաշտոնը: Գրիգոր նախ Պոլիս եկավ 1717-ին, ուր մնաց ատեն մը նվիրահավաքության համար ու դարձավ Երուսաղեմ հետը տանելով հավաքված գումարը և եկեղեցական նվերները և Երուսաղեմի տոկոսներով դիզաբարդված պարտքը ոչ միայն վճարվեցավ, այլ նաև ճոխացավ սուրբ Աթոռը նորանոր ստացվածքներով և սպասներով:

Օրվան Հայոց Հայրապետը Աստվածատուր Ապատանցին վախճանեցավ 1725-ին: Այդ միջոցին Էջմիածին կգտնվեր Օսմանյան տերության իշխանության ներքև: Ուստի Կոլոտ, իբրև տերութենեն ճանչված գլուխ Հայաստանյայց եկեղեցվո, ձեռնարկեց Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության: Այս նպատակով Մայր եկեղեցվո մեջ գումարված ժողովը կաթողիկոս ընտրեց Անգարայի առաջնորդ Ուլնեցի Կարապետ եպիսկոպոսը, որ 1726-ին կաթողիկոս օծվեցավ 12 եպիսկոպոսներով Պոլսո Մայր եկեղեցվո մեջ: Նորընտիր կաթողիկոսին առաջին գործը եղավ Կոլոտին տալ եպիսկոպոսական աստիճան, նույն Մայր եկեղեցվո մեջ, քանի որ Կոլոտ դեռ եպիսկոպոսական կարգ չէր ստացած:

Կոլոտ օգտվելով կաթողիկոսի ներկայութենեն և Երուսաղեմի Աթոռը ավելի ամուր հիմքերու վրա հաստատելու և երկու Աթոռներու միացումը անկարելի դարձնելու համար, խմբագրեց երեք կանոնական նզովքներ, զորս ենթարկեց Ամենայն Հայոց Հայրապետի վավերացման: Այդ երեք կանոնական նզովքով կարգիվեր. 1.—Երուսաղեմի միաբանութենեն դուրս մեկու մը Սաղիմա պատրիարք ընտրվիլը. 2.—Աշխարհական ներկայացուցիչ կամ վերակացու կամ գործակալ ղրկելը Երուսաղեմ. 3.—Միացումը երկու Աթոռներուն:

Կոլոտ իր մնացյալ 15 տարիները անդուլ հարատևությամբ ընծայեց շինարար, գրական ու կրթական գործերու: Վախճանեցավ 1741-ին փետրվար 12-ին, 63 տարեկանին, գրեթե հյուծած ու մաշած չարաչար աշխատանքներե, չորակերութենե և ֆիզիկական տառապանքներե և հոգեկան նեղություններե: Թաղվեցավ գավիթը ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո, զոր ինք փառավորապես վերաշինած էր, և որուն կապված էր մասնավոր սիրով մը: Թաղման արարողությանց նախագահեց իր կարողագույն աշակերտը Հակոբ աստվածաբան վարդապետ Նալյանը, որուն հանձնած էր Կոլոտ պատրիարքարանի գործերը իր վերջին տարիները, երբ ինք ամբողջությամբ նվիրված էր դասախոսության:

Ղալաթիո ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիի վերջին հիմնական վերա-

շինութենեն հետո, 1965-ին, Կոլոտի նշխարները ամփոփվեցան ներքնահարկ ոխտատեղիի արևմտյան ծայրը, զանգակատան ճիշտ ներքևը, հատկապես շինված դամբարանի խուցին մեջ: Իր շիրմին վրա հետևյալը գրված է Կոլոտի աշակերտ և հաջորդ Հակոբ Նալյան պատրիարքին կողմե.

«Մառան շնորհաց գանձ լուսաշաւիղ,
Արհուոյն Յոհաննու վեհից շառաւիղ:
Կրօնիւք մաքուր յԱմրտոլ մարզեալ,
Աստ Բիւզանդիա գերազանց փայլեալ:
Նախագուշակութեամբ վերնոյն տեսչութեամբ,
Որ և պատրիարք ազդեալ ընտրութեամբ:
Խիւսացեալ ի մեր սրբոյն Յակոբայ,
Նորին վճարեաց զպարտսն գերակայ:
Կնդրուկ կանոնաց բուրեաց քաղցրաշունչ,
Որ յոխորտ հնչէր րամից հոմաշունչ:
Լցեալ սիրաբաղձ ի յաննինջ սրտին,
Որով կազդուրէր վէրս ունեցողի:
Տեառնս ի պատիւ վէմս այս ուղղակի,
Ի յորմս հաստատեալ՝ կայ ինքն առաջի
Ի ներ քսանհինգ ամաց պատրիարքութեան
Յամի Տեառն 1741 փետր. 13 ըստ հայոց ՌՃՂ—1741»:

Այս տապանագրի տողերուն առաջին գիրերը քով-քովի դրվելով կկապեն «ՄԱԿԱՆՈՒՆ ԿՈԼՈՏ»: Իսկ Գրիգոր Շղթայակիր ուրիշ տապանագիր մը պատրաստած է Կոլոտի համար և դրած Երուսաղեմի սուրբ Փրկիչ վանքը, ուր կթաղվին Երուսաղեմի պատրիարքները, հետևյալ պարունակությամբ:

«Աստուածաբանից իշխանի այս է տապան,
Ու անօթոյ հոգւոյն սրբոյ այս օթարան,
Տէր Յովհաննէս պատրիարքին Բիւզանդիոյ.
Որ թագ փառաց էր դպրատան Ամրտոլու:
Զիմաստութեան սուրբ մարգրիտն որ է թագուն,
Ի լոյս էած՝ այս գերարփիս խորին գիտուն.
Քսանհինգ ամաց միջի գեր քան զիմաց
Զհարիւր ամաց գործ կատարեաց այս լուսազգեաց:
Սուրբ Յակոբայ պարտուց բարձման սա է պատճառ.
Եւ լուացման ազգիս ախտի սա է սուրբ օճառ.
Վկայասէր, իմաստասէր, ոսկեբերան.
Զոր արք տգէտք չեն գովելոյ զնա արժան»:

Կոլոտի վաստակը

Կոլոտի առաջին երկու կարևորագույն գործերը եղան, ինչպես տեսանք, Հայաստանյայց եկեղեցիի երկու մեծագույն և կարևորագույն վանքերը իրենց «լեռնակուտակ և մեծատոկոս» պարտքերեն ազատելը: Նախ ազատեց Մշո ս. Կարապետի վանքը, որուն ի նպաստ հանգանակության եղած միջոցին Աստուծո նախախնամությունը առաջնորդած էր զինքը Կ Պոլիս. ուր արդարև «Վէքիլ և աթոռակալ», նշանակվեցավ Երուսաղեմի վանքին, որուն քչիկ մը շունչ առնել տվավ նախ կալվածական և այլ գրավները փրր-

կելով Պոլիսեն բերած դրամներով, և ապա երաշխավորելով չորս տարիեն ամբողջ պարտքին վճարումը. ինչ որ արդարև կատարվեցավ իր և Գրիգոր Շղթայակիր պատրիարքի ջանքերով: Նույնքան կարևոր մեծագործություն մըն է Կոլոտի համար, Երուսաղեմի պատրիարք նշանակելը իր երեց և սըրտակից դասընկերը՝ Գրիգոր Շիրվանցի վարդապետը, որ արդարև հրաշքի համազոր գործունեություն ունեցավ, գրեթե ի հիմանե վերանորոգելով ս. Հակոբա վանքը և ճոխացնելով զայն թանկարժեք անոթներով և սպասներով: Կոլոտի ամենամեծ արգասիքներեն մեկը եղավ լման քսանհինգուկես տարի, առանց ընդհատի և մեծագույն հաջողությամբ պատրիարքական Աթոռի վրա մնալը, երբ իր ընտրությունը կանխող 26 տարիներու ընթացքին 13 պատրիարքներ 17 անգամ աթոռ բարձրացած և իջած են: Կոլոտ ոչ միայն երկարագույն պաշտոնավարությունը բոլորեց Պոլսո պատրիարքներու մեջ, այլ նաև քչիկ մը հանդարտություն բերավ, ու քչիկ մը խաղաղություն և կարգ ու կանոն հաստատեց Պոլսո հայ կյանքին մեջ այնպիսի ատեն մը, երբ տիրող ամենեն հատկանշական երևույթն էր խռովությունը և անկարգությունը: Ուղղակի կամ անուղղակիորեն գեթ մասամբ հանդարտեցուց կաթոլիկամիտները, որոնք չհամարձակեցան հրապարակը աղմկել և միտքերը պղտորել, ինչպես կընեին արդարև ավելի քան հարյուր տարիներե ի վեր. որովհետև Կոլոտ ոչ միայն հրաժարած էր հալածանքի քաղաքականութենե այլև առած էր անոնց ձեռքեն իրենց գլխավոր զենքերը. դպրոց բացած էր. ուր կրնային հաճախել այլևս կաթոլիկներու կրթական խայծեն տարվելու հակամետները. կաթոլիկ գրողներե գիրքեր թարգմանել տված էր, բերանը գոցելով անոնց, որոնք կպոռային թե ինչո՞ւ չօգտվիլ կաթոլիկներու անթիվ-անհամար օգտակար գիրքերեն: Վերջապես զարկ տված, քաջալերած ու հովանավորած էր գրական ու մշակութային ամեն տեսակ ձեռնարկները: Ասոնցմե զատ, շատ խոհական, իմաստուն և բարի կամեցողությամբ լեցուն հարաբերություն կմշակեր եվրոպացի կաթոլիկներու առաջնորդներուն հետ, ներառյալ կաթոլիկ երկիրներու դեսպանները: Այնպես որ կաթոլիկամետները զորավոր պատրվակ չունեցան ի ձեռին ժողովուրդը գրգռելու:

Այս ըսվածները սակայն ընդհանուր իրագործումներ են, որոնց մասամբ մը անդրադարձած էինք արդեն քիչ առաջ Կոլոտի կենսագրության ընթացքին: Այստեղ մենք կանգ պետք է առնենք և մի առ մի թվենք իր այն մասնահատուկ իրագործումները որոնք շոշափելի և թվելի են:

Շինարարություններ

Գործոն հոգիներ առհասարակ շինարար եղած են, շինարար՝ նյութական մարզին մեջ: Շինարար՝ հոգևոր բարոյական ու մտավոր մարզերուն մեջ: Կոլոտի ավելի քան քառորդդարյան պատրիարքությունը շինարարության շրջան մըն է վերոհիշյալ բոլոր մարզերուն մեջ: Կարծես բավարար եղած չըլլային Կոլոտի սպառած անդուլ-անդադար ճիգերը և ջանքերը վարչական ու բարեկարգական խնդիրներու կարգադրությանց մեջ, ընկերային ու ժողովրդային պահանջքներու տնօրինությանց համար, ու մանավանդ կաթոլիկյան կնճիռները լուծելու աշխատանքներուն մեջ, որոնք ինքնին կկլանեին անոր ամբողջ ժամանակն ու կորովը: Կոլոտ ստիպվեցավ հակազդել ու մաքառիլ Պոլսո հաճախադեպ հրդեհներու դեմ, որոնք կլափեին հայարակ ժողովուրդի անթիվ տուներուն հետ նաև եկեղեցիներ ու հանրա-

Կոլոտի թելադրանքով ու մեկենասությամբ: Կհիշատակվի նաև այս դպրատան աշխատավորներուն մեջ «Գասպար Դպիրն Սեբաստացի» զոր Կոլոտ կկոչե «հարազատն մեր ի Քրիստոս, որ բազում երախտիս ունի ի վերայ մանկանց մերոց»: Իսկ Նալյան որ վայելած էր ասոր հոգածությունը իբրև աշակերտ դպրանոցի, կըսե. «Դաստիարակն և մանկամարզն լուսահոգւոյ հօր մերոյ-Կոլոտի»—Դպրատան, նրբանկատ հայրապատիւն ծերունի, «Մեծ Ամուճա» (Բաբգեն ծ. վրդ. Կյուլեսերյան, Կոլոտ, էջ 69): Իսկ թե ինչ նյութեր կավանդվեին, հստակ չէ. բայց լինելով գլխավորապես եկեղեցականներ պատրաստելու սահմանված վարժարան մը, և նկատի ունենալով ժամանակի ոգին, դժվար չէ ենթադրել որ առհասարակ կրոնական եղած են անոնք, այսինքն ս. Գրքի ուսմունք և աստվածաբանություն: Իսկ արտաքին գիտություններեն՝ քերականություն, իմաստասիրություն, հռետորություն, երաժշտություն, ժամանակակից գիտությունը և ամենայն հավանականությամբ նաև լատիներեն լեզվի ուսուցումը:

Այս դպրոցը կարևորագույն դերը կատարեց արևմտահայ մշակութային ու մտավորական զարթոնքի մեջ, միաժամանակ հիմքը դրած ըլլալով ապագա մեր դպրոցական ցանցին, որ սկսավ իրականանալ ԺԸ դարուն վերջին տասնամյակին: «Այդ դպրոցը Թուրքիո հայոց մտավորական կյանքին վրա հանգրվան մըն է», կըսե Բաբգեն ծ. վրդ. (ԿՈԼՈՏ, էջ 69):

Դպրոց մը անհրաժեշտ է ազգի մը առաջնորդներ պատրաստելու համար, ինչպես նաև ժողովուրդ մը լուսավորելու համար դարուն ոգիին և պահանջքներուն համաձայն: Կոլոտ այդ էր որ ըրավ Պոլսո մեջ հաստատելով մեր առաջին բարձր վարժարանը: Հետաքրքրական է նշել, որ Կոլոտի դպրոցը գրեթե ուղիղ գծով ժառանգորդը և շարունակությունը եղավ Սյունյաց դպրոցին, որուն ամենեն հեղինակավոր դեմքն է Գրիգոր Տաթևացի Մեծ վարդապետը, ուրկե Դանիել վարդապետ մը անցած է Բաղեշի Ամլորդի վանքը, և որուն հաջորդներուն մեջ նշանավոր հանդիսացան Բարսեղ Գավառցին և Վարդան Բաղիշեցին, որուն աշակերտած է Կոլոտ: Այնպես որ, ինչպես կհաստատե Օրմանյան. «Բարեշի-Ամրտոլի—աշակերտությունը հայ վարդապետության նոր զարգացման սկզբնապատճառը կրնար ըսվիլ: Որովհետև այս տեղեն ելած վարդապետներ ամեն կողմ ցրվեցան և ամեն կողմ դպրոցներ բացին»: Ասոնցմե մեկը, Մելքիսեդեկ Վժանեցի, «Իր գիտությիւնը փոխադրեց Էջմիածին՝ Մովսես կթող. Տաթևացիի օրով» (Ազգապատում, հտ. Բ. 1710—1711): Իսկ Կոլոտ զայն բերավ Պոլիս:

Գրիգոր Շղթայակիր իր նամակներեն մեկուն մեջ Կոլոտը կկոչե «Բազմածին» և «Որդւովքն բերկրացեալ»: Այս կոչումները ակնարկություն են Կոլոտ պատրիարքի աշակերտներուն բազմության: Արդարև Հովհաննես Կոլոտի վարժարանի շրջանավարտներեն հանվանե կհիշվին 27 հոգիներ, որոնցմե նշանավորագույնն է Հակոբ Նալյան աստվածաբան վարդապետը, որ անմիջապես հաջորդեց Կոլոտին իբրև պատրիարք և վերատեսուչ և դասախոս Ուսումնամայր «Դասատան»: Նալյան նշանավոր է նաև իբրև մատենագիր որ ավելիով լրացուցած է իր Մեծ վարդապետին պակաս ձգած գրական աշխատանքը հորինելով շուրջ 15 անուն գիրքեր զանազան նյութերու մասին, կրոնական գույնով և ժողովուրդին օգտակար հանդիսանալու ոգվով:

Այս 27—30 աշակերտները Կոլոտի դպրոցին մեջ հմտանալե, մարզվելե ու դաստիարակվելե հետո կոչված են կրոնական ասպարեզին և վարդապետական աստիճանին և ղրկված են զանազան վայրեր քարոզչական

և այլ պաշտոններով: Ասոնց մեջ ծանոթ է նաև Սահակ Ահագին, Էրզրումի առաջնորդը, որ մինչև իսկ հայոց կաթողիկոս ալ ընտրվեցավ, սակայն չկրցավ Էջմիածին հասնիլ ու վախճանեցավ 1763-ին Կարնո մեջ:

Այս աշակերտներն ալ քալեցին Կոլոտի բացած լուսո և լուսավորության շավիղեն մինչև դարուն վերջերը, և իրենց աշակերտները լուսո այդ ջահը հանձնեցին ԺԹ դարու սահմանադրության և գրական զարթոնքի սերունդին:

Կոլոտի Մատենադարանը

Հովհաննես Բաղիշեցի պատրիարքի կարևոր գործերեն մեկն ալ եղավ հիմնադիր հանդիսանալը Մատենադարանի մը, զոր անվարան կրնանք նկատել Պոլսո առաջին ազգային ու մեծագույն Մատենադարանը. «Ինձ ծանոթ հիշատակարաններուն համեմատ, Կոլոտեն առաջ հարուստ Մատենադարան ունենալու գաղափարը չկար Պոլսո մեջ», կըսե Բաբգեն ծ. վրդ. Կյուլեսերյան (ԿՈԼՈՏ, էջ 100): Այս Մատենադարանը թեև հաստատված էր իր հիմնած Դասատունին կամ բարձր վարժարանին համար, սակայն Կոլոտ շատ ավելի ընդարձակ հորիզոն մը ուներ իր մտքին մեջ երբ զայն կկազմակերպեր: Իր հիշատակարաններուն մեջ Կոլոտ բազմիցս կհայտնե իր մտահոգությունը մեր ազգին մեջ գրակարդացությունը լայն տեղ գրաված ըլլալուն համար: Ուստի կդիմե կարելի բոլոր միջոցներու գրակարդացությունը և ընթերցման սերը սփռելու համար իր ժողովուրդին մեջ: Տպագրության մեկենաս հանդիսանալը, հովանավորելը և քաջալերելը այս նպատակը կհետապնդե. «Կոլոտ իր ազգին լուսավորության համար անհուն եռանդ ուներ. կուզեր որ հայ ազգը տաք ընթերցասիրության մը վարժվեր և լափեր ժամանակին օգտակար նկատված մատենագրական բոլոր արտադրությունները» (Բաբգեն ծ. վ. Կյուլեսերյան, ԿՈԼՈՏ, էջ 80):

Կոլոտի թարգմանություններն ալ այս նպատակով կկատարվեին: Այս գիրքերով ոչ միայն իր դպրոցի աշակերտությունը պատրաստ մտքի սնունդ պիտի գտներ, այլ նաև հայ ժողովուրդի ընթերցասեր տարրը իր տրամադրության ներքև պիտի ունենար նոր գիրքեր, եթե ոչ ամեն տեսակ նյութերով՝ գեթ ժամանակի ոգիի և պահանջքներուն գոհացում տվող պարունակությամբ: Օրինակ. «Անտառ Այլաբանութեան» գրքի առաջին էջերուն մեջ ըսված է, թե այս թարգմանությունը կատարված է «Ի փառս մեծագոյնս Աստուծոյ և յօգուտ աշակերտաց եղելոց մերոյս ԴԱՍԱՏԱՆ և ԱՅԼ ԸՆԹԵՐՑԱՍԷՐ անձանց»:

Տրված ըլլալով որ Մատենադարանի կազմության սկզբնական նպատակը Կոլոտի հաստատած դպրոցին օժանդակ հանդիսանալն էր, ուստի կենթադրվի որ Մատենադարանն և դպրոցը Կոլոտ հաստատած էր իր դպրոցը Սկյուտարի բարձունքին, այսօրվան ճեմարան-վարժարանին տեղը, հետևաբար Մատենադարանն ալ այնտեղ հաստատված էր նախապես: Երբ վարժարանը ապա փոխադրվեցավ Գումգաբը, Մայր եկեղեցիին կից, նույնպես Մատենադարանն ալ վերջնապես հաստատվեցավ Գումգաբը պատրիարքարանի մոտ, այսօրվան Պեզճյան վարժարանին բակին մեջ: Այս Մատենադարանը ճոխացավ ետքեն Նալյան պատրիարքի անձնական հավաքածոյով և իր գրած, թարգմանած կամ տպագրել տված գիրքերով: Ապա այս գրադարանը իր տպագիր ու ձեռագիր հատորներով կորիզը կազմեց Ազգային Մատենադարանին, որուն հիմքերը դրվեցան Կո-

լոտի ծնունդեն լրիվ 100 տարի հետո, և որուն մնացորդները հասած են մեզի և այժմ կմնան ներկա պատրիարքարանի շենքին մեջ:

Իսկ Կոլոտի Մատենադարանը բնականաբար տակավ առ տակավ կազմվեցավ ու բաղկացավ հետևյալ հավաքածոներե. նախ իր օրով հրատարակված բոլոր տպագիր գիրքերեն 1—2 օրինակներով, 100—150 գիրք: Ապա իր թարգմանություններով, 10—12 գիրք, որոնցմե տպագրված է միայն «Գիրք Օրինակաց և Նմանութեանց» անուն գործը, Սահակ Անագինի ձեռամբ, Կոլոտի մահեն 10 տարի հետո: Երրորդ, մեր հին մատենագրութենե շատ մը ձեռագիրներու ընդօրինակություններով, որոնց թիվին մասին ոչ մեկ ակնարկություն կա իր կամ ուրիշներու կողմե: 1878-ին տրված տեղեկության մը համաձայն Ազգային Մատենադարանին մեջ կան ընդամենը 1616 գիրք, որոնցմե 360 հատը ձեռագիր, զորս ցուցակագրած է Բաբգեն վրդ. Կյուլեսերյան 1902-են սկսյալ, և որ տպագրվեցավ 1961-ին Անթիլիասի Կաթողիկոսության տպարանեն, Կյուլպենկյան Հիմնարկի ծախքով:

Կոլոտի գրական վաստակը

Ավելի մեծ եղած է Կոլոտի ծառայությունը հայ գիրին և հայ գիրքին: Տարակույսե վեր է, թե Կոլոտ օժտված էր մտավորական բազմակողմանի կարողություններով: Իսկական գրասեր, «բանասեր» և ուսումնասեր անձնավորություն մըն էր, որ կհետաքրքրվեր հավասարապես թե՛ սրբազան և թե՛ արտաքին գիտություններով, որոնց սերմը իր մեջ ցանված էր Ամրտոլու դասատան մեջ, և զոր մշակած ու ուրծարծած էր Մշո ս. Կարապետ վանքին մեջ, և զոր բերավ ծաղկեցուց ու զարգացուց Պոլսո մեջ:

Կոլոտի գրչեն ելած գրական երկ մը չունինք: Իր ժամանակը և իմացական ձիրքերը ամբողջությամբ հատկացված են վարչական անհետաձգելի զբաղմունքներու և հանրային փրկարար գործունեությանց, ինչպես նաև դասախոսական ու քարոզչական աշխատանքներու: Այս բարդ ու բազմակողմանի աշխատանքներուն մեջ գրեթե ատեն չէ ունեցած հատկացնելու զուտ գրչի աշխատանքներու: Հետևաբար ան իր գրասիրական հակումները պսակեց նախ ընդօրինակել տալով մեր հին մատենագրութենեն կարևոր գործեր, ապա քաջալերելով և հովանավորելով ամեն տեսակի օգտակար գիրքերու տպագրությունները. և հուսկ ապա մեկենաս հանդիսանալով բազմաթիվ թարգմանությանց:

Առաջին հերթին, իր անմիջական թելադրությամբ և ծախքերով կատարվեցան բազմաթիվ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Այս մասին հետևյալ հավաստումը կընե Բաբգեն ծ. վրդ. Կյուլեսերյան, որ առիթը ունեցած է աչքե անցնելու Կոլոտի մեկենասությամբ կատարված բոլոր թարգմանությունները, և ցուցակագրած զանոնք հանգամանորեն իր «Ցուցակ Ձեռագրաց Ազգային Մատենադարանի Ղալաթիո» աշխատասիրության մեջ, հրատարակված Անթիլիասի տպարանեն 1961-ին. «Եթե ոչ որակին, գոնե քանակին կողմե կգերազանցեն ատոնք Ոսկի և Արծաթի դարերու բոլոր թարգմանությունները... ես Կոլոտի թարգմանությունները դիտել կուտամ—ինկատի կառնեմ—իբր անակնկալելի իրողություն մը այնպիսի ժամանակի մը մեջ, ուր գրական աշխարհը ամուլ էր և հոգևոր իշխանությունները բնավ չէին խորհած կամ չէին կրնար խորհիլ գրական պետքերու վրա» (ԿՈԼՈՏ, էջ 43): Ասիկա թեթև իրողություն մը չէ ուրիշ բազմաթիվ իրագործումներու կարգին:

Իր դարուն մտավորական բարձրագույն խավը կներկայանար լատին կրոնավորներով, որոնք կվիտային Արևելք, հատկապես Պոլիս, և դեպի իրենց կքաշեին հայ ժողովուրդի ուսման ծարավ տարրերը և մտավոր հետաքրքրություն և կարողություն ունեցող անձերը: Կոլոտ նախ բարի նախանձով կլեցվեր՝ դարուն չափանիշներով՝ մտավորապես լավ պատրաստված լատին կրոնավորությունը տեսնելով: Նույնը կուզեր փոխադրել հայ իրականութենեն ներս: Ասոնք իրենց մտքին սնունդը ստացած էին բնականաբար, լատին հեղինակներե. ինչո՞ւ իր ժողովուրդը չունենար նման գիրքեր. ինչո՞ւ հայ եկեղեցվո պաշտոնյաներ պզտիկ մնային անոնց առջև: Ուստի վճռեց լատին մտքին գեթ մի քանի գիրքերը հայացնել: Այս մասին ինք Կոլոտ այսպես կարտահայտվի իր հիշատակարաններեն մեկին մեջ, զոր կուզենք առաջ բերել թարգմանաբար. «Երբ կնկատեի լատիններու գրական ու մտավոր փարթամությունը և կանդրադառնայի իմ ազգիս և իմ իսկ աղքատությանս—այս մարզի մեջ—կմորմոքեի սրտիս մեջ, թե ինչո՞ւ անհոգ ծուլությունը նախամեծար կնկատեի իմ ազգիս, և ինչո՞ւ անուսումությունը նախընտրելի կհամարե քան ուսմունքի սերը. ու մանավանդ ի՞նչ պատճառով, իմ ազգես ավելի աղքատ ազգեր ավելի ճոխացած են իմաստությամբ, օրինակ ասորիները և վրացիները, որոնցմե շատ բան թարգմանված է կըսեն մեր նախնիք: Ուստի որպեսզի թե՛ զիս և թե՛ իմ ազգս ուրիշներու հարստությամբ ճոխացնեմ, ամբողջ Աստվածաշունչ Գրքի այլաբանական մեկնությունը ի լույս ընծայեցի—ոչ իմ ուշիմությամբ—այդ շնորհքեն զուրկ էի և եմ—այլ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ և ուրիշներու հարըստությունը իմ ազգիս շտեմարանին մեջ ամբարելով» (Հիշատակարան 4 ԱՆՏԱՌ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ գրքի, ԿՈԼՈՏ, էջ 198):

Ու թարգմանչական այս կարևոր աշխատանքին համար նախախնամությունը Կոլոտին հայթայթեց կարող գործակից մը ու «նշանավոր թարգմանիչ» մը հանձին Խարբերդցի Ղուկաս «հոգնահանճար» վարդապետին, որ էր «Աբրահամ տոհմե Գասպարեան», որ Իտալիա կրթված և լավ հմտացած էր լատիներենի և իտալերենի: Ղուկաս վարդապետ շարունակեց իր թարգմանությունները Կոլոտի վախճանումեն հետո ալ հովանավորությամբ և մեկենասությամբ անոր հաջորդ Հակոբ Նալյան պատրիարքին: Այս թարգմանությունները հաստ և տոկուն թուղթերու վրա՝ թարգմանչին արագ ու առաջին ձեռագրով կպահվին մինչև այսօր մեծ հատորներով: Ասոնք առաջին հերթին մեծապես օգտակար հանդիսացան Կոլոտի աշակերտներուն, որոնց կդասախոսեր նաև Ղուկաս վարդապետը:

Այս թարգմանությանց մեկ ցանկը պահած է Երուսաղեմացի Հաննե վարդապետը ըստ հետևյալի.

1.— ԳԻՐՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ և կամ ՕՐԻՆԱԿԱՑ,—այս խոշոր հատորը 1750-ին տպագրված է Կոլոտի դպրոցի ուրիշ նշանավոր աշակերտին, Սահակ Ահագինի ծախքով, «Գիրք Օրինակաց և Նմանութեանց» անվան տակ:

2.— ԳԻՐՔ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍԿՈԹՈՍԻ:

3.— ԳԻՐՔ ԵՕԹՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

4.— ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, որուն մեջ կըսվի թե կա նաև «Հաւաքումն բոլորի աստուածաբանութեան Թովմայի Ագուինացւոյ հրեշտակակրօն վարդապետի»:

5.— ԱՆՏԱՌ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԵԱՆ. Երկու հատոր:

6.— ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐԿՐԻՆ. Երկու հատոր:

7.—ԽԱԲԷՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ: Երկու հատոր:

8.— ՋԵՐՄԵՌԱՆԴ ԿԵԱՆՔ:

9.— ՔԱՐՈԶԱԳԻՐՔ Ի ՎԵՐԱՑ ԱՄԵՆԱՅՆ ԿԻՐԱԿԷԻՑ:

10.—ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ ԿՈՎՈՒՏԻՆ. Երկու հատոր. Ա-ը՝ ԼՈՃԻՔԱ, իսկ Բ-ը՝ ՖԻԶԻՔԱ: Իսկ Գ և Դ հատորները, ՄԵԹԱՖԻԶԻՔԱ և ԲԱՐՈՅԱԿԱՆ, դեռևս ոչ են թարգմանեցեալ, այլ են կիսակատարք:

11.— Փոքր գիրք մը՝ «Հայր մեր»-ի վրա:

12.— Փոքր գիրք մը՝ «Վասն Զղջման և Ապաշխարութեան»:

13.— Ներկրթումն Ապաշխարողի:

14.— ՊԱՐՏԷԶ ՀՈՎՈՒԱՑ:

15.— «Եւ այլ մասնաւոր իրաժողովն». այսինքն Կոլոտի ուրիշ աղբյուրներեն հավաքած թարգմանությունները, զորս նույնքան կգնահատեր ու կքաջալերեր: Ասոնցմե էր, օրինակ, Ստեփանոս Լեհացիի ի նորո թարգմանած «Դիոնիսիոսի Արիսպագացւոյ Յաղագս Երկնայնոյ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ»: Այսինքն հոգիներու և հրեշտակներու մասին գիրքը, ինչպես նաև Մխիթար Սեբաստացիի Մատթեոսի Ավետարանին Մեկնությունը: Այս մասին ըսված 1977-ի ԲԱԶՄԱՎԵՊ-ին թիվ 1—2 Բացառիկին մեջ. «Մխիթար Աբբայի հրատարակած գիրքերով ամենեն ավելի հետաքրքրվողը, եղավ Պոլսո պատրիարք Հովհաննես Կոլոտ... որ ինքնին տարված էր ժողովուրդին հոգևոր սնունդ հայթայթելու բուռն փափաքեն, հրապարակ հանած էր բազմաթիվ հոգեշահ գիրքեր»: Կհիշվի նաև վկայությունը Հ. Թովմասի մը, որ «Լավ ըմբռնած էր պատրիարքին հոգեբանությունը, այնպես որ շատ գեղեցիկ կերպով կպատկերացներ գրելով, «Պատրիարքն Կոլոտ մոլեալ է ունենալու զբազմազան գրեանս, վասն այսորիկ զՏէր Ղուկիասն ինքեան թարգմանիչ արարեալ է, և տալով թարգմանել նմա զբազմաթիւ գրեանս՝ վատնէ հոլով դրամս ի պատճառս նորանոր գրոց...»: Ըսված է մինչև իսկ ժամանակակից գրողե մը, որ «Լսած է թե պատրիարքն հայոց Կոլոտ 25 քսակ դրամ վատնած է վասն գրյանց» (էջք 71—72):

Անշուշտ այս թարգմանություններեն ոմանք քննադատվեցան իրենց ժամանակին այն պատրվակով թե անոնցմե ոմանք կպարունակեն նաև վարդապետություններ, զորս մեր եկեղեցին չընդունիր: Հաննե վարդապետ որ պատասխանած է այս քննադատություններուն նախ կհաստատե որ անոնց մեջ եղած հայ եկեղեցվո վարդապետությանց հակառակ ուսուցումները հազիվ հարյուրեն մեկ համեմատությունը կներկայացնեն, ասոր համար կարժե՞ նետել մնացյալ 99 համեմատությունը: Մեկ չորցած ճյուղին համար պե՞տք է արմատախիլ ընել պտղատու ծառ մը: Մինչև իսկ, կըսե Հաննե, Արիստոտելի և Պորփյուրի գրությանց մեջ ալ կան մեր չընդունած տեսակետներեն. բայց Դավիթ Անհաղթ թարգմանած է զանոնք հայերենի նկատի ունենալով անոնց օգտակար կողմերը: Բաց աստի, կշարունակե Հաննե, որչափ շատ ծանոթանանք անոնց գիրքերուն, այնքան ավելի դյուրություն կունենանք արիաբար պատասխանելու անոնց առարկություններուն. որովհետև անոնց զենքերով անոնց դեմ պետք է զինվինք: Հազար անգամ լավ կըլլար եթե մինչև իսկ հունաց, ասորվոց և լատինաց բոլոր գիրքերը թարգմանված ըլլային հայերենի: Ուրեմն, կեզրակացնե լուսամիտ վարդապետը, «Թող լռեն այսպիսի ուսումնատյացներու լեզուները, որոնք այդքան հավնած ու հիացած են իրենց հիմարությանց վրա. որոց ներեսցե Տեր» (էջ 150—155):

Այսպիսի դիտողությունները չշեղեցուցին Կոլոտը իր բռնած ուսումնասեր ճամբայեն. գիտեր թե դրական գործեր առհասարակ կքննադատ-

վին մարդոցմե որոնք անատակ ու անկարող են դրական գործի: Կոլոտ ևս ակնարկելով այսպիսիներուն կըսե իր Հիշատակարաններեն մեկուն մեջ. «Երբ կտեսնենք մեկը, որ աստվածապաշտ ընթացք ունի և լեցված է գիտությամբ ու բարեկրոնությամբ և լուսաշավիղ գործերով, ոչ միայն բարի նախանձ չենք ունենար անոնց նմանելու, այլ կջանանք զայն ալ խափանել իր ընթացքեն»:

Հովհաննես Կոլոտ մեծ վաստակ ունի նաև ՏՊԱԳՐԱԿԱՆ մարզին մեջ: Ինք բարեբախտ եղավ, որ իր օրով արդեն իսկ գոյություն առած են Պոլսո մեջ քանի մը տպարաններ, որոնցմե ամենեն նշանավորն է ԳՐԻԳՈՐ ԴՊԻՐ ՄԱՐԶՎԱՆՑԻ-ինը, Ամրտոլի աշակերտությենեն, որ տպարան բացած է 1698-ին: Կոլոտ պատրիարքի օրով իր տպարաններեն լույս տեսած են 11 անուն գիրքեր, որոնց մեջ հայտնի են Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ», Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի ծախքով հրատարակված և Կոլոտի «Պատմագրաբար Յիշատակարան»-ով կնքված: Գրիգոր Տաթևացիի «Գիրք Հարցմանց»-ը. Նարեկը, դարձյալ երկու պատրիարքներու հանձնարարությամբ տպված: Հսկա «Յայսմաւուրք» մը: Եվ Հովհաննես Ոսկեբերանի «Ներբողեան ս. Գրիգոր Լուսաւորչին» որ կնկատվի Մարզվանցիի տպարաններեն լույս տեսած վերջին գիրքը 1734-ին:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԴՊՐԻ ՏՊԱՐԱՆԸ, որ հիմնված է 1698-ին, և որմե լույս տեսած են 43 կտոր գիրքեր: Կես դար հայ տպագրության ծառայած է. իր մահեն հետո իր որդին Հովհաննես շարունակած է զայն: Իր տպարաններեն լույս տեսած գիրքերեն առնվազն 5 հատը Կոլոտի հանձնարարությամբ տպված են. օրինակ, Գրիգոր Վկայասերի «Հարանց Վարք»-ը. Ծարակնոց. Հաննե վարդապետի «Պատմութիւն Երուսաղէմի» երկիցս, «Յանախապատում» և այլն...:

ՍԱՐԳԻՍ ԴՊՐԻ ՏՊԱՐԱՆԸ հիմնված է 1701-ին. անկե լույս տեսած են 23 կտոր գիրքեր. օրինակ. Կյուրեղ Երուսաղեմացիի «Կոչումն Ընծայութեան». Բառգիրք Հայոց. և այլն...:

ՊԵՏՐՈՍ ԼԱՏԻՆԱՑԻԻ ՏՊԱՐԱՆԸ հիմնված է 1700-ին մնացորդովը տպարանին Ոսկան վարդապետին, որուն ազգականն էր ինք. 1705-ին գրեթե նույնությամբ վերատպագրելե հետո Ոսկան վարդապետին հրատարակած Աստվածաշունչը, Կոլոտի օրով հազիվ 3 աննշան գիրքեր լույս ընծայած է այս տպագրիչը:

ԱԲՐԱՀԱՄ ԹՐԱԿԱՑԻԻ ՏՊԱՐԱՆԸ հաստատված է ԿՈԼՈՏԻ օրով, 1730-ական թվականներուն և լույս ընծայած մինչև Կոլոտի մահը 9 գիրքեր, որոնցմե են, օրինակ, Տաթևացիի «Ամառան» և «Ձմեռան» հատորները:

ԲԱՐՍԵՂ և ՍԱՐԳԻՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԵՂԲԱՐՑ ՏՊԱՐԱՆԸ հիմնված է 1736-ին Մայր եկեղեցիին հովանիին տակ, Կոլոտի թելադրանքով և օժանդակությամբ, որուն օրով լույս տեսած են հոգևոր և բարոյական բովանդակությամբ 6 գիրքեր:

Իսկ Կոլոտի շրջանին՝ բայց տպարանները չհայտնագործված 9 ուրիշ գիրքեր ևս լույս տեսած են Պոլսո մեջ: Ուրեմն Հովհաննես Բաղիշեցիի պատրիարքության շրջանին այսինքն 25—26 տարիներու ընթացքին **Պոլսո մեջ լույս տեսած են 104 անուն գիրքեր, ինչ որ մեծ հաջողություն մըն էր այդ օրերուն համար: Իսկ նույն շրջանին, 1715—1741 փետրվար, Մխիթարյաններու կողմե լույս տեսած են 36 անուն գիրքեր, որոնք ևս մեծ մասամբ սպառում գտած են Պոլսո մեջ և քաջալերված Կոլոտ պատրիարքե:**

Հետաքրքրական է նշել որ Պոլսո մեջ առաջին անգամ 1567—1569 Աբգար Դպրի տպագրած 6 գիրքերե՝ և Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանի հրատարակած 2 անանշան գիրքերեն հետո, պետք է սպասենք մինչև ԺԷ դարուն վերջավորության 1698-ին, մեր երկրորդ ու հաջորդ զույգ տպագրիչներուն՝ Գրիգոր Մարզվանցիին և Աստվածատուր Դպրին, որպեսզի տպագրական արվեստը ամուր արմատներ նետեր Պոլսո մեջ, անգամ մըն ալ արմատախիլ չըլլալու պայմանով: Մինչև Կոլոտի պատրիարքանալը, 1715-ին, տպագրված են արդեն 56 անուն գիրքեր, վերոհիշյալ առաջին չորս տպարաններեն—միջին հաշվով տարեկան երեք գիրք: Իսկ իր մահեն—1741-են—մինչև ԺԸ դարուն վերջը լույս տեսած են 165 անուն գիրքեր, ներառյալ մեկ և նույն գրքի մեկե ավելի տպագրությունները. այսինքն միջին հաշվով տարին նվազ քան երեք գիրք: Բաղդատական այս իրողությունը կհաստատե որ Կոլոտի պատրիարքության 26 տարիները ամենեն բեղմնավորը եղած է տպագրական արտադրության մեջ, ավելի քան 104 գիրքերու տպագրությամբ—միջին հաշվով տարին 4 գիրք:

Կոլոտի հիշատակարանները

Կոլոտ ժամանակ չէ ունեցած գրավոր երկեր հորինելու: Այդ չի նշանակեր սակայն որ իր գրիչը բոլորովին անգործ մնացած է: Թեև իր հաջողագույն աշակերտը և հաջորդը՝ Հակոբ Նալյան պատրիարք կվկայե, որ Կոլոտ ավելի խոսող ու գործող մարդ եղած է քան գրող, բայց բոլորովին անպտուղ չէ եղած նաև գրական մարզին մեջ: Նախ գրած է բազմաթիվ նամակներ, համայնքային տարողությամբ, ինչպես կվկայե Գրիգոր Շղթայակիր պատրիարք իր նամակներուն մեջ: Սակայն Կոլոտի և մեր չար բախտեն անոնցմե ոչ իսկ հատ մը հասած է մեր ձեռքը. անհետ կորսված են:

Ներկայիս, իբրև գրավոր վաստակ Կոլոտեն ունինք միայն իր ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ զորս գրած է ան իր հրատարակել տված գիրքերեն ոմանց մեջ, բայց մանավանդ իր թարգմանել տված երկերուն ետևը: Ասոնցմե չորս հատը հրատարակված են Բաբգեն ծ. վրդ. Կյուլեսերյանի «ԿՈԼՈՏ» անուն ուսումնասիրության գրքին մեջ, էջք 142—200: Կոլոտի ամբողջ գրական ժառանգությունը կազմող այս տասը-տասներկու ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ արժանի էին առանձնատիպ հրատարակության, հանդերձ ուսումնասիրական ծանոթագրություններով, դուրս բերելու համար անոնց մեջեն Կոլոտին լեզուն, ոճը, մտքին պաշարը և իր տեսակետները աստվածաբանական և ուրիշ զանազան կրոնական ու գիտական հարցերու մեջ: Նման ուսումնասիրություն մը կարևոր լույս պիտի սփռե նաև իր դարուն հայերեն գրական լեզվին, ընդհանուր ոգիին և մտածողության վրա. քանի որ Կոլոտ իր դարուն արևմտահայ մտքի բարձրագույն ռահահորդ՝ առաջնորդներեն մեկն է:

Եզրակացության բերելու համար մեր գրությունը, անգամ մըն ալ կհաստատենք, որ պոլսահայ պատմության վեճերով մաշած ու աթոռամոլության կիրքերեն տկարացած մեկ պահուն, գրեթե հանկարծ կերևի այդ քաղաքի հորիզոնին վրա Հովհաննես Բաղիշեցի վարդապետը և Աստուծմե իրեն համար նախասահմանված փրկարար դերը հաջողապես կատարելե հետո կանցնի պատմության, մեծ անուն և մեծ արդյունք ձգելով իր ետին: Իր ժամանակին հարցերը լուծելու համար իր նախորդներեն ոմանց ի գործ դրած

ժիտական, այսինքն հալածողական ուղղութենեն հրաժարելով սկսավ կիրարկել դրական ծրագիրները: Ջանաց լուսավորել իր ժողովուրդը գիրքով ու գիտությամբ: Մտքի խավարը փորձեց փարատել իմացական ջահեր վառելով: Տգիտությունը փորձեց հալածել գիտության լույս տարածելով, կրոնական մոլեռանդությունը ուզեց չեզոքացնել ուրիշ եկեղեցիներու գիրքերը թարգմանելով, հաստատելու համար այն իրողությունը թե անոնց տեսակետներն ալ ըստ մեծի մասին և հիմնական հարցերու շուրջ կարծվածին չափ տարբեր չէին մերինեն:

Փոքր էր Կոլոտ մարմինով, մեծ եղավ միտքով. ավելի մեծ գործքով: Պիտի կրկնենք քաղյակը—որ ըստ երևույթին կրնա չափազանց թվիլ, բայց խորքին մեջ ոչ միայն վկայությունն է ժամանակակից գրչի մը, այլ նաև՝ անցյալ 300 տարիներու մեր պատմության.

«Զի էր այր մեծ հանապազօր.
Ներհուն, ճարտար և բանիւ հզօր,
Որոյ նման մինչև այսօր
Ոչ ոք եկաց Դէտ անդանօր»:

«Անդանօր»-ը ակնարկություն է Պոլսո Աթոռին և հետևաբար ըսվածը համապատասխան է իրականության նաև մինչև ցայսօր:

Փառք Ամենակալին որ լեցուց զայն իր շնորհքներով ու ղրկեց մեզի երբ ամենեն ավելի պետք ունեինք իրեն պես քաջ ու կարող հովվապետի մը, նախ փրկելու համար մեր երկու պատրիարքական Աթոռները նյութական ու բարոյական քայքայումե, ապա փարատելու տգիտության ու բարոյական կուրության խավարը, գիրի, գրքի, կրոնքի և կրթության լույսով, հանդիսանալով միաժամանակ նախահայրը Արևմտահայության Զարթոնքի շարժումին, անոր կեդրոնին՝ Պոլսո մեջ:

Հարգանք ու խանդաղատանք իր հիշատակին. պատիվ այն ժողովուրդին որ ծնավ զայն.

Հանդիսության վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
(8 հոկտեմբեր 1978 թ.)

Ջերմ գոհունակություն ենք հայտնում ամենապատիվ պատրիարքին հայոց Կոստանդնուպոլսո, որ անցյալ տարի գարնանը հատուկ նամակով հիշեցրեց Մեզ, թե այս տարի լրանում է Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակը: Եվ առաջարկեց, որ Մայր Աթոռը հանդես գա իր խոսքով: Մենք ուրախությամբ ողջունեցինք այս նախաձեռնությունը և, ինչպես գիտեք, հանդես եկանք հատուկ կոնդակով, որ այս առավոտ կարդացվեց տաճարում: Մեր կոնդակով ոգեկոչեցինք այդ մեծ հոգևորականի կերպարը, նրա վաստակը և նրա մեծ առաքինությունը, որով նա հանդիսանում է նախակարապետը արևմտահայոց վերածննդի: Մենք գիտենք մեր ողբերգական պատմությունից, որ Անիի անկումից և մանավանդ Կիլիկյան թագավորության քայքայումից հետո, ԺԶ—ԺԷ դարերը ամենամռայլ ժամանակաշրջանը հանդիսացան մեր ժողովրդի պատմության: Թվում էր, թե հայությունը հանգում է: Ճիշտ է, կային պատմական Հայաստանի հողա-

մասից դուրս որոշ գաղութներ՝ Հալեպում, Բաղդադում, Եգիպտոսում, Լեհաստանում, Մոլդավիայում, Տրանսիլվանիայում և այլ վայրերում, սակայն դրանք մայր հողից հեռու հայկական կյանքի կենտրոններ էին, որոնք երկար չէին կարող դիմանալ և չէին կարող ներկայացնել բուն հայ ժողովրդի հոգին, կենսունակությունը, կրոնական, եկեղեցական, կրթական, մշակութային-ազգային տեսակետից: Բուն Հայաստանի հողի վրա տիրում էր իսկական խավար, հոգեկան և իմացական իմաստով: Նույնիսկ Կոստանդնուպոլսի բավական մեծ հայկական կենտրոնը հեռու էր հայկական ոգեկանությունը ներկայացնելուց: Նույնիսկ հայ եկեղեցուց ներս սկսել էին տիրապետել անկումային երևույթներ: Անհույս պայմանների մեջ էր ապրում հայությունը այդ շրջանում: Հայի ստեղծագործ ոգին սկսում էր հետզհետե հանգել: Հայաստանցի գյուղացիք, երբ տեսնում են մի քանդված եկեղեցու շենք, կիսավեր կամ փուլ եկած, չեն ասում՝ քանդված եկեղեցի, չեն ասում՝ փուլ եկած եկեղեցի, չեն ասում՝ ավերակ եկեղեցի, այլ ասում են՝ խոնարհված եկեղեցի: Սա շատ հատկանշական է և շատ իմաստալից ու խորհրդանշական: Կարծում ենք, ոչ մի այլ ժողովուրդ այսպիսի արտահայտություն չի գործածում: Հայ գյուղացու գիտակցության մեջ եկեղեցին չի կարող կործանված լինել, չի կարող քանդված լինել, չի կարող ավերակ լինել, այլ խոնարհվում է միայն ժամանակավորապես: Կարծում ենք, որ այսօր կարող ենք ասել, թե ԺԶ և ԺԷ դարերին էլ հայ ոգեկանությունը պարզապես խոնարհված էր, սակայն ինչ-որ առկայծ ճրագ վառվում էր անհերևույթ կերպով: Այդ առկայծ ճրագը իր առաջին ճառագայթները սկսեց դրսևորել մեր վանքերում: Քիչ առաջ սրբազան պատրիարքը հիշեց, թե ինչպես այդ կայծերը, տակավին ս. Տաթևացու օրերից, փոխանցվել են այլ վանքերի. և դրանց ծնունդը հանդիսացավ հենց ինքը՝ Հովհաննես Կոլոտ պատրիարքը, իբրև աշակերտը իր ուսումնատենչ, լուսամիտ վարդապետների: Այս ձևով է, որ ԺԸ դարի սկզբին առաջին հայ լուսավորիչը հանդիսացավ Հովհաննես Կոլոտը բուն մայր հողի վրա, իբրև եկեղեցաշեն, իբրև եկեղեցական կյանքը վերանորոգող, իբրև ժողովրդի միտքն ու հոգին լուսավորող ու դաստիարակող առաքյալ: Հիմա մեզ համար հեշտ է ասել հարյուր գիրք թարգմանել հին մատենագիրներից և հրատարակել, դպրոցներ և տպարաններ բաց անել, բայց այն ժամանակ, երբ Հայոց աշխարհում տիրում էր մտավոր խավար, հուսահատություն և ազգային գիտակցության քայքայում, ահա այդպիսի պայմաններում ինչպիսի՜ հզոր անհատականություն պետք է ունենար մարդ, ինչպիսի՜ հերոսական ճիգեր ի գործ պետք է դներ, կուրծք տար հազար ու մի դժվարությունների՝ կարողանալ ճեղքելու համար խավարը մտքերի և նոր հույս ու հավատ ներշնչելու խոնարհվածներին: Այդ հզոր անհատականությունը հանդիսացավ Հովհաննես Կոլոտ պատրիարքը: Կոստանդնուպոլսում նա հայ եկեղեցու ու ժողովրդի կյանքը կարճ ժամանակի ընթացքում կերպարանափոխեց: Հեղաշրջեց ամբողջ կյանքի պատկերը պղտահայության՝ հոգևոր, եկեղեցական, կրթական ու գրական իմաստով: Ահա թե ինչու Մենք մեր ձայնը միացնում ենք սրբազան պատրիարքի բնորոշումներին, ասելու համար՝ պատի՜վ այն ժողովրդին, որ այսպիսի մեծերի ծնունդ տվեց այդ խավար ժամանակաշրջանում:

Հովհաննես Կոլոտ պատրիարքը նախակարապետն է, սկզբնավորողը արևմտահայ վերածննդի ամեն տեսակետից, նաև արևմտահայ գրական լեզվի հետագա կազմավորման և զարգացման տեսակետից: Նա է, որ դրեց

հիմքերը Կոստանդնուպոլսում մտավոր մի մեծ շարժման, և ապա իր աշակերտները՝ տասնյակ ուսումնատենչ երիտասարդ վարդապետներ, շարունակեցին նրա սրբազան առաքելությունը, ու այս ձևով է, որ ոտքի կանգնեց թե՛ հոգևոր և թե՛ իմացական ու գրական իմաստով Արևմտահայ հատվածը մեր ժողովրդի, ժողովուրդ, որ հանդիսանում է այսօր էլ համայն հայության համար մի մեծ, հարուստ գրական ժառանգություն ունեցող մի համայնք:

Մենք մեր օրերին հպարտ ենք մեր հայրենիքի գիտական, կրթական հիմնարկներով՝ Մատենադարանով, գիտությունների ակադեմիայով, համալսարաններով, բազում ինստիտուտներով, և արդար է մեր հպարտությունը: Սակայն պետք չէ մոռանանք նաև մեր մեծագործ նախնիներին, որոնք շատ դժվարին պայմաններում, ամբողջական խավարի պայմաններում կարողացան հայ ոգեկանության ջահը վառ պահել և սկզբնավորել վերածնունդը հայ ժողովրդի: Եվ հիշենք այսօր, թե նույն պայմաններում և նույնպիսի լուսավորիչների ջանքերով սկիզբ առավ վերածնունդը նաև արևելահայոց մեջ:

Այս երկու հայ հատվածները վերածնված, այսօր միացած են մեր արդի Հայաստանի իրականության մեջ, որ որոշակիորն է հայ մշակույթի, հայ ոգեկանության, հայ դպրության և հայ գիտության: Մենք պետք է աղոթենք առ Աստված, որ վերածնված մեր մայր երկրում՝ Սովետական Հայաստանում, հայոց ազգային մշակույթի զարգացման ընթացքը շարունակվի, քայլ առ քայլ բարձրանա մեր ժողովրդի գիտական, կրթական ու մշակութային մակարդակը, և մեր ժողովուրդը հետզհետե հասնի ավելի պայծառ բարձունքների՝ եղբայրական ժողովուրդների կողքին: Մեզ հարկավոր է խաղաղություն, խաղաղություն մեր երկրում և ամբողջ աշխարհում. մեզ հարկավոր է աշխատանք, անդուլ աշխատանք և անսահման սեր դեպի մեր ազգը, դեպի մեր մշակույթը, դեպի մեր անցյալը և ներկան. մեզ հարկավոր են տաղանդներ ու պայծառ նկարագրեր. մեզ հարկավոր է նաև հանճարի փայլատակում, որպեսզի մեր ազգը իր ստեղծարար առաքելությունը շարունակի քաղաքակիրթ մարդկության ծոցում: Մենք հավատում ենք դրան և այդ հավատքով է, որ մի անգամ ևս խոնարհվում ենք մեր մեծ նախնիների կյանքի ու վաստակի առաջ և ուխտ ենք կատարում քայլել նրանց ճանապարհով:

Տասը րոպե ընդմիջումից հետո գործադրության է դրվում հանդիսության գեղարվեստական բաժնի ծրագիրը:

Առաջինը հանդես է գալիս Երևանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի ջութակահարների խումբը, որը կատարում է Կոմիտաս վարդապետի «Խնկին ծառին», «Այսօր տօն է» և «Վաղարշապատի պար», Արամ Խաչատրյանի «Անդանտինո և ադաժիո» ստեղծագործությունները՝ գեղարվեստական ղեկավարությամբ հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Ամեմյանի:

Հանրապետության վաստակավոր արտիստուհի, ասմունքող Սիրվարդ Մեսրոպյանը հանդես է գալիս ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմից հատվածների արտասանությամբ, գրաբար և աշխարհաբար:

Այնուհետև Մայր տաճարի երգչախումբը կատարում է Կոմիտաս վարդապետի «Ո՞վ զարմանալի» Ծննդյան տաղը (մենակատար՝ Օնիկ Թերզյան), «Գովեա՛, Երուսաղէմ, զՏէր»-ը և «Էջ Միածինն ի Հօրէ» Մայր Աթո-

ռի հոգևոր հիմնը. մշակումը և գեղարվեստական ղեկավարությունը՝ հանրապետության վաստակավոր արտիստ Խորեն Մեյխանեջյանի:

*
* *

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Հոկտեմբերի 9—14 օրերին հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորներն ու հյուրերը հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռին և մեկնեցին անմոռաց տպավորություններով:

Սեպտեմբերի 31-ից հոկտեմբերի 18 օրերին Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակի, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի և Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակի հանդիսությունները, ուխտագնացություններն ու այցելությունները անցան հոգեշահ, տպավորիչ, բովանդակալից, եկեղեցասիրական ու հայրենասիրական խոր ապրումներով և վերածվեցին հայ ժողովրդի սրբություն սրբոց և մեր հավատքի դարավոր կենտրոն ս. Էջմիածնի, նրա արժանընտիր գահակալի, մեր վերածնված մայր հայրենիքի շուրջ բոլոր պատգամավորների, հյուրերի, ուխտավորների և բովանդակ հայ ժողովրդի համախմբվածության, սիրո և հավատարմության ու համազգային սրտառուչ տոնի:

Այս սրբազան օրերին բովանդակ հայության սրտագին մաղթանքն է, որ երկա՜ր ու երկա՜ր տարիներ մեր շինարար, հայրենասեր Հայրապետի ձեռքում միշտ պայծառ ու ծաղկած մնա «իշխանութեան գաւազանը»՝ ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ի շինություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի բարօրություն հայրենյաց և ի մխիթարություն հայ ժողովրդի, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի: